



ՏԵՍՈՒԹԻՒՆ ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՒ ԽՈՐԵՆԱՅԻՆՑ ԱՂԲԵՐԱՑ

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ



Ի այս դիտելու եմք մասի, որ ըստ վկայութեան Նունքիոսի ¹, Կոստանդիանոսի մահուամէն անմիջապէս յետոյ՝ Յոյմք և արևելեայք սկսան շուտով տօնել զճա, իբրև դասակից Առաքելոց: Այս տօնս ըստ հին տումարին յունական եկեղեցւոյ կը կատարուէր, — զոյգ ընդ Հեղինայ, — 'ի 21 ² Մայիսի, այնքան մեծաշուք՝ մինչև տէրութեան արեանք ամզամ կը փակուէին: Ուստի այս առթիւ բնական էր որ Յունաց, այսպէս և Հայոց փայլում և հետևանք հանճարներ սրէին իրենց միտքն և զրիշը, պէտպէս մերրողեանմերով հոչակել ամոք ամցեալ կեանքն և կենաց արարուածները, որ իրենց և քրիստոնէութեան պարծանքն եղած էր: Այսպէս ուրեմն 'ի վաղ ժամանակաց մինչև ցծ դար պէտք է որ զըրուած կիմէին բազմաթիւ գրութիւններ, թէ և ժամանակը քիչ բան հասուցած է մեզ: Նոյն իսկ մեր աղքատիմ մատենագրութեան մէջ կը տեսնենք այսպիսի գրուցաց այլ և այլ հետքեր: Փ. Բուզանդացիմ՝ Յակ. Մծրմացւոյ արարուածով, Ազաթամզեղոս՝ հրեշտակի երևանս և թագադրութեան վէպով, այսպէս և Ջեմոր, մամաւանդ Խո.

1. Bolland. Acta Sancti. Aug. T. III. p. 578, et Mai. T. V. p. 12 - 14.
 2. Կենսագրութիւն Կոստանդիանոսի, Դ. Գիրք:

րհմացին երկիցս իբրև համաշխարհի տօնական սուրբ յիշատակութեամբ արծագամ զգեր կու տամ, յաստուածուատ Կոստանդինոսի վերայ կատարուած սքանչելեաց: Երկրորդ եթէ Հայք և Միջագետք՝ Արգարու և Տրդատայ առաջին քրիստոնեայ թափափուրաց և մոցս դարձի պատմութիւնը բարեպաշտութեամբ վիպասանութեամբ փոխեցին, Յոյնք կամ մոյթք չէին կրնար մնալ ամտարբեր մակ Կոստանդինոսի մկատմամբ: Հետևապար գուցեցին անոր վարքը ժամանակակից մեծ եկեղեցականի մի կամ սուրբ Բոտապետի գործոց հետ, ինչպէս Արգարուն Ադդէի, և Տրդատայմ Գր. Լուսաւորչի հետ, Արիոսեանց բերամը գոցելու համար. և ո՛վ արդեօք Սեղբեստրոսէն աւելի մեծ սրբութեամբ և հեղինակութեամբ համբաւ տարածած էր յԱրևելս և յԱրևմուտս. և կամ որո՞ւմ պատմութիւնը աւելի քան զՍեղբեստրոսին ծածկուած ՚ի խոր հմուտեամբ և զեմուտեամբ:

Երրորդ՝ երբ Արևելք իր եկեղեցական բազմախումբ պատմագրաց ձեռքով, առիթ և դիւրութիւն ունէր որ և է սրբագան վէպ կամ դէպք ՚ի գրի առնուլ և տարածել, Արևմուտք, ըմբռնակառակն դեռ ամոնցմէ ոչ մէկն ունէր. հետևաբար ամէն գրական և կրօնական մորուսիւն, ամէն հմագոյն վէպ յԱրևելից ամցնելով հոմ արծագամ զու տար: Ամտարակոյս այս տեսակ անվաւեր գրուածոց հետ ամցան մակ Կոստանդինոսի և Հեղինեայ վիպասանութիւնքն ևս: Այո՛, Բարդուխտէն և ՚ի Բոլլանդեանց սկսելա միջև Գիւշէն և Ֆրոնիթիմգահմ՝ զխոնականք առհասարակ յայսմ կը համաձայնին: Ո՛չ ապաքէն Սեղբեստրոսի Վարդայ առամձին մասանց վերլուծութիւնն իսկ զայս կը հաստատէ: Մենք աւելորդ կը համարիմք այս տեղ ուրիշներէն պայքան անգամ կրկնուած փաստերը վերստին յեղյեղել. այլ թէ ի՞նչ պարագայից բերմամբ մտաւ, և թէ ի՞նչպէս մորոգութեամբ վերադարձաւ յետ դարու միոյ յԱրևելք: Այս էական կէտս ոչ ոք ՚ի քննասիրաց ըստ արժան բաւականին պարզեց. որով և անոր ծագման մասին եղած քննադատութիւնք իսկ մնացին ապարդիւն, և կամ խակ ու վաղահաս պտուղներ յառաջ բերին:

Արդ՝ մորոյն հռովմայ կամ Բիզանդիոնի և հնոյն մէջ եղած կրօնական յարարեւրութիւնքը՝ որչափ և սերտ և բազմակողմանի եղած ըլլան Ե. դարու մէջ, որչափ որ ալ Կոստանդինոսի և Հեղինեայ յիշատակը մուկրագործուած էր ՚ի հռովմ, սակայն և այնպէս չենք կրնար ըսել, թէ այն դարու առաջին քաւորդին և հոգևոր իշխակութեամբ բացայայտ վճռով մի մտած ըլլայ ամոնց սոնդծաբանութիւնն ՚ի հռովմ. այլ կամ արևելքէն հոմ ուխտի գազդ բարեպաշտ եկեղեցականաց և կամ յոյն գաղթականաց և գրագիտաց ձեռքով մտած անդ. և մտաւ հաւամբէն Քաղկեդոնի ժողովքէն ետքը. այսինքն է հակաբաղկեդոնեան Ալեքսի և Պետրոս գրգումանք եղած աղմկալից օրերում մէջ, երբ Յուլիան Արիոսեանցի հայրապետին հետ՝ ուրիշ բարեխառ եկեղեցականներ և աշխարհիկք իսկ ապաւինեցան արևմտեան կայսրութեամբ մայրաքաղաքը: Այս բանիս յայտնի ապացոյցն արդէն տրուած է մինչև այն ժամանակ լատին մատենագրաց պահած խոր լուսութեամբը, զոր տեսանք ՚ի վեր անդր:

Իսկ Ե. դարու երկրորդ կիսում երբ Կոստանդինոսի և Հեղինեայ սոնդծաբանու

1. Քահանայապետական գրոց անծանօթ հռովմայ (տես Գիւշէն, Liber Pontif. p. 255) խօսելով Գեղասիոսի գործոց վերայ, կ'ըսէ, թէ « Hujus temporibus, այսինքն է 492 - 496 iterum venit relatio de Grecia, eo quod multa mala et homioidia fierent a Petro et Aecacio Constantinopolim. Eodem tempore fugiens Iohannes Alexandrinus episcopus catholicus et venit Romam ad sedem apostolicam, » etc.

թիւնք դեռ մոր մտամ 'ի հօտվմ, ոչ այնքամ իրենց հակապատմական պարոմակու-
 թեամբը թերևս, որքամ լեզուով դժուարամատչելի եղամ ժողովրդեանս. բայց ժառան-
 գատրոաց մէջ կային ծանօթք հելլէն լեզուին, մամաւանդ թէ գաղթական յոյներ ևս,
 որք մատչելի ըրին զայն բազմաց: Թեպէտև դար մ'ամբողջ սահեր անցեր էր քրիս-
 տոմէութեամ այն կրկին դիւցազանց զործոց և յիշատակարանաց վրայէն, սակայն
 ամոց վէպերն և յիշատակը տակաւին կենդանի էին հօտվմայ և ամոր դրացի երկրաց
 մէջ: Կենդանի էին դեռ 'ի բերամ ժողովրդեան Ս-բ-իւ լեռն՝ Սեղբեստրոսի արար-
 անծովք. կենդանի և կամզում կային Կոստանդիանոսի հոյակապ տաճարն և սրբա-
 զամ մուկրատուութիւնք, այսպէս և Կապիտոլիոն, որք զիտոց պատմական ծանօթու-
 թիւննորը կը լծակէին ռամկին մէջ շրջող վէպերու և Պօղոսի գերեզմանաց այցելոք
 կ'աւմուռին և կը տամէին մինչև Արևելքի խորերը: Եւ յիրաւի եթէ Սիմանքեան հա-
 ւաքածոյից կամ Liber Pontificalis գրոց հեղինակք յետ երկուց դարոց կարացին
 այնքան բամ աւանդել մախնի քահանայապետաց զործերու մասին, որչափ ուրեմն
 մոյնքամ դար յառաջ սարողք: Սեղբեստրոսի պաշտօնն և յիշատակն թէ՛ աւանմինն
 և թէ՛ հասարակաց յիշատակարաններով * արդէն մուկրագործուած էին, ոչ ինչ մուսգ
 և Կոստանդիանոսիմ, երբ Սեղբեստրոսի վ-բ-ոց ստեղծաբանութիւն եկաւ աւելի ևս
 ժողովրդական գործել զայն: Հօտվմայ գիտնական դասը համածայն չզոմներով այն գրու-
 թիւնը՝ Եւսեբիոսի, Հերոնիմոսի և Ամբրոսիոսի աւանդածներուն հետ, խեթի մայեցաւ
 ամոր վերայ. բայց որովհետև ժողովրդեան մէջ շրջող զրուցաց համածայն էր, այն
 պատմաուս իսկ ունեցաւ բազմաթիւ ըմթերցողներ, — ըստ վկայութեան Գելասիոսեանց
 կամին. — և եկեղեցեաց մէջ իսկ գործածական դարծաւ: Բայց այսու հանդերձ բաւա-
 կան դժուարութեանց հանդիպեցաւ հօտվմայ մէջ՝ մինչև որ ընդունելի եղաւ: Ուստի
 այս և ուրիշ կրօնական դէպք մի առիթ տուին Գելասիոս պապին հրապարակաւ
 յայտարարել, թէ այն գրուածքը կարէր այնուհետև արծակ համարձակ վերծանիլ.
 և այս դէպքս էր Բիւզանդիոնի և հօտվմայ եկեղեցեաց և վեհապետաց մէջ տեղի ունե-
 ցած մոր յարաբերութիւնն, զոր քահանայապետական զրոց հեղինակն մասնաւոր
 կերպով նշանակած է, — Գելասիոսի ձեռքով եղած կարևոր բարեկարգութեանց մէջ
 ժամանակագրական մեծ սխալով մի, — Ակակեանց և Պետրոսեանց կուռակցութեանց
 մէջ ունեցած դատաւարութեամբ, և Ամաստաս կամ լաւ ևս Ջեմոն կայսեր հետ
 ըրած ազդու բանակցութիւններով:

Մակայն Գելասիոս այնպիսի պաշտօնական յայտարարութիւն մ'ըրած ժամանակ
 pro urbis et orbis, չէր կրնար սեղբեստրոսեան և կոստանդիանոսեան ստեղծա-
 բանութիւնը ըստ մախնիմ ձեխիմ ներկայացնել. որովհետև այն գրութիւնն արևելեան
 եկեղեցւոյ և մտաց ծնունդ ըլլալով, սեծաւ մասամբ Կոստանդիանոսի և Հեղինոսայ վե-
 ռայ կը դառնայր, և արևմտեանէն աւելի արևելեան եկեղեցւոյ և կայսերութեան վի-
 մակը վեր բռնել նկրտած էր: Ուրեմն Գելասիոսի յայտարարածը Սեղբեստրոսի վա-
 ռուց մոր խնրագրութիւնն էր, զոր իւր ըրած եկեղեցական բարեկարգութեանց համա-
 ծայն ձևած էր: Եւ որովհետև Քաղկեդոնի ժողովքէն յետոյ Բիւզանդիոնի պատրիարք-
 ներէն ունանք՝ Կոստանդնուպօլսոյ ժողովոյն տուած պարզ պատուոյ արտօնութեանն

1. Sbu. De Rossi, Boll. 1872, p. 33. — Muratori, Litter. Rom, T. I, p. 454, — Duchesne, Liber. Pontif. p. 201.

վերայ յեցած, կը պահամընէիմ ⁴, որ ոչ միայն կայսերական քաղաքի մետրապօլտակամ աթորը գործադրական իրաւասութիւն ևս ունենայ Փրքուն Ասիոյ և Յունաստանի եկեղեցեաց վերայ, այլ նոյն իսկ անկախ ըլլայ Ս. Պետրոսի գերագոյն գահէն, իբր հաւասար միմ. ուրեմն Գեղաստիոս քաղցրութեամբ ամոնց փառասիրական ձկտումնը ինքնարհեցնելու, և երկու եկեղեցեաց մէջ Կոստանդիանոսի և Սեղբեստրոսի օրով հաստատուած վաղեմի միութիւնն ամրապնդելու համար, և ցուցնելու մանաւանդ թէ Քիւզանդիոնի առաջին կայսեր զարծն և կրօնական բարեփոխութիւնը՝ ամբողջատ 'ի վերուստ հոսվմայ հայրապետին, այն է Ս. Սեղբեստրոսի ձեռքով կատարուած էին, հարկ էր որ ամոր **Վարդ** մեծ կարևորութիւն տայր, և այնու մանաւանդ և մոնց բերանը կարկէր:

Յիրակի, նոյն իսկ այն **Վարդ** լատին խմբագրութեան և արևելեան հմազոյն աղբերաց մէջ եղած աչքի զարնող տարբերութիւնքն իսկ յայտնի հաւաստիք են այսպիսի եղելութեան: **Բ.** Այսու միայն կը մեկնուին և հասակամայի կ'ըլլան այն երկու խորհրդը՝ դաւոր կէտերն, այսինքն թէ իմչո՛ւ համար մինչև Ե դար լատինք խոր լուծեան քօղ մի ձգելով Սեղբեստրոսի ստեղծաբանութեան վերայ, կարծես խեղդաման առնել կ'ուզեն զայն, միեւնո արևելեայք յանախակի կոչումներ կ'ընեն անտի՛ ընդդէմ Արիւմոսաց և հեթանոսաց. իսկ վեցերորդ դարէն վերջ, ընդհակառակն, նորա կը լռեն, — գոզցես իմ տրան և անհաւան երեւցնելով եղած փոփոխութեան վերայ, — ուր լատինք մեծածայն աղաղակաւ կը հուչակեն զայն: Այո՛, Յոյնք կը մնան ամբարբաւ մինչև Ը. դարը, վերահաս վտանգ մի միայն, — այն է **Պարթևաբարդ** մորթութիւնը, — կուգայ լուծել ամոնց զաքարիական լուծիւնը և կու տայ բարբառել:

Թեոփիլ ² պատմագիրն խլախուսուած **Արիւմոս** Ա պապին առ Կոստանդիանոս և Իրենէ զրած թղթք ³ վերայ, յորս մէջ կը բերուին, — Սեղբեստրոսի վարքէն, — Ս. Աւագերցն Պետրոսի և Պողոսի պատկերաց և առ Կոստանդիանոս երևման հատուածքը, — առաջին անգամ ասպարէզ կ'ելնէ, — յամին 785—818, — և կը թօթափէ անուր մկատմամբ յոյն մատնագրաց երկդարեան լուծիւնն և քունը: Այո՛, նա կը զուգէ Կոստանդիանոսի պատմական գործերը՝ Սեղբեստրոսի ստեղծաբանութեանց հետ, զի յետ յիշելոյ խաչի երևումը, Մարսենտիոսի յաղթելն և նորա դարձը, կը ծանուցանէ և Սեղբեստրոսի ձեռքէն ընդունած մկտութիւնը: Նորա մէջ բերած այն փաստը, թէ Կոստանդիանոս՝ Եստեբիոս Նիկիոյ տղայացիէն շատ յառաջ մկտուած էր 'ի հոսով, ապա թէ ոչ չպիտի կարենաւ Նիկիոյ ժողովքին մասնակցելու, եթէ հաւաստի ևս չընդունինք, սակայն ամտարակոյս կամ Դ. դարու Կոստանդիանոսի չատագովական գրուածքէ մ'առնուած է, — զորս 'ի վեր անդը ենթադրեցինք, — և կամ Գեղաստիոսի թղթերէն:

Պարթևաբարդ, մականուանեալ **Արթուր**՝ ամբողջ զուխ մի, — այն է Ա. զ. Դ. — մուրիած է՝ համառօտելու Սեղբեստրոսի **Գործերը**, դնելով անոր խորագիր **Ex tōn Blos & γίους Σιλβեսτροս** ⁴. Հեղինակս Կապիտոլինոնի միշտապի արարուածով

1 Այս պատմական եղելութիւն մ'է, զոր Անատոլիոս և Յուստինիանոս երեց մինչև ծայրայեղութեան հասուցին, բռնաբարելով և տանջելով զուրբազան քահանայապետն **Վիտիւս**՝ Կ. Պօլսոյ արգելարանաց մէջ:
 2. Տես Ed. Bonn. 1889, T. I, p. 19, 24, 25.
 3. Այս թղթերէն առաջինը, — գրեալ յամին 783, — կարդացուեցաւ Նիկիոյ Բ. ժողովոյն մէջ 'ի հերքումն պատկերամարտից:
 4. Տես Migne, Patrolog. Græc. T. C, p. 646.

կը սկսի. բայց դուրս թողուցել է կայսեր դարձի և 'ի Նիկիոմիդիա կատարուած սկրտութեամ պատմութիւնքը: Առասպելեալ սկրտութեամ 'ի Սպաստ կը շանայ աւելի փաստեր բերել:

Սիւրեն Մեհարեան ¹, — յամիմ 914—965, — տեղ տեղ յեղաշրջելով մէջ բնութեւն է Սեղբեստրոսի Վարդը, իր մեծագամն հաւաքման մէջ, տեղ տեղ ալ դուրս թողով բնագրիմ այս ինչ կամ այն տեղիմ. և այս առանց բաժաւոր պատճառի մի ըրած չէ:

Յունական եկեղեցւոյ Յայտնութեան հնագոյն, այն է Վասիլ Բ. կայսեր ամուսնի յամիմ 975—984 յորինուածը, Յունուար երկու կարգելով Ս. Սեղբեստրոսի օրոքը, — ըստ վաղեմի յիշատակարանաց, — կը քաղէ ամոր Վարդը էական կէտերմ իրիկ ամերկրայեիի այսպէս « Σιλβεστρος δ σοφός... πολλά θαύματα ἐποίησε, καὶ τὸν μέγαν Κωνσταντίνον, τὸν πρῶτον ἐν Χριστιανοῖς βασιλεύσαντα, πρὸς τὴν Χριστὸν πῶστιν ὠδήγησεν, καὶ τῷ ἁγίῳ βαπτίσματι τὴν τοῦ σώματος λέπραν, καὶ τὰ τῆς ψυχῆς πάθη, διὰ τῆς ἐπιφανείας τῶν ἁγίων ἀποστόλων Πέτρου καὶ Παύλου, ἀπεκάλυψε ».

Սիւրենի ² Յայտնութեան ևս, — գրեալ Ժ—ԺԱ դարում, — ինչպէս նաև Ժ դարում գրուած Վասիլիանի թիւ 974 յոյն ձեռագիրմ կը համաձայնիմ Վասիլեանիմ: Վերջնոյմ մէջ բաց 'ի սկրտութեան յիշատակութեան, կը պարունակուիմ նոյնպէս արդիւնէն ինքնորոշ, և մանկանց կոտորածի մանրամասնութիւնքը: Այսպէս նաև Ղեւոնդիոս ³ ժամանակագիր յամիմ 1000—1020, Միք. Գրիկա ⁴ յամիմ 1118, Կեղբեմոս ⁵ յամիմ 1057, և Ձեռագրաս ⁶ յամիմ 1118:

Մեծք աւիրորդ կը համարիմք դեռ ուրիշ կոչումներով ծանրաբեռնել մեր գրութիւնք, զի միմչև հիմայ մէջ բերուած ընծայութիւնքս իսկ ըստ բաւականիմ համոզեցուցիմք եմ Սեղբեստրոսի Վարդը կրկիմ խմբագրութիւնք եղած լինելուն, այսինքն եմ մարկիմ յումարեմն և լատիներեմն 'ի վերջայս Ե. դարում, կամ 'ի սկզբմ վեցերորդիմ:

Այսուհետև այս կարևոր խնդիրն ըրոր իւր ծանրութեամբը կը կեդրոնանայ արևելեան այն երկու հնագոյն և հետագոյն աղբերաց վերայ, որպիսիք եմ ասորիմ Յուլ. Սիւրենի և մերս Խորենի, որոնք Ե դարու վերջիմ կիսում ծաղկեցան և գրեցիմ իրենց գործերը, և սակայմ երկուքմ ալ Սեղբեստրոսի ստեղծարարութեան համանման բաներ կ'աւանդեմ մեզ: Բնականապէս ուրեմն այս հարցս կ'ելլէ մեզ ընդ առաջ. Արդեօք սորա Սեղբեստրոսի Վարդը լատիմ խմբագրութեանէ՞մ կամ ամոր վրայէ՞մ յետոյ ուրեմն եղած թարգմանութեանէ՞ մի մերջնուած գրեցիմ, թէ ընդհակառակմ մեզ ամծանօթ յուկարեմն և քամ զայն հնագոյմ գրուածներէ:

'Իստիւրե եմք, որ Ասորի մեծ հեռորմ և բամաստեղծիմ իր Կոտամիդիանոսի մկրտութեան վերայ յորինած ժառիմ ⁷ մէջ, երկայմ մախերգամբով մի յետ ծանուցանեմք:

1. *Sbu Sarius, De Sanct. T. VI. p. 1173 - 1187.*
2. *Sbu Thes. Monum. ecclies. և այլմ, և կամ Henrioi Casisii. Lec. Ant. adjecit Jac. Basnage, T. III, p. 1.*
3. *Sbu Ed. Bonn. p. 84.*
4. *Ed. Bonn. p. 46 - 467.*
5. *Ed. Bonn. 1837. T. I, p. 475.*
6. *Sbu Ed. Parisii. T. II, I. XIII, p. 3 - 5.*
7. *որում խորագիրմ է. « Omelia sopra l' Imperatore Costantino e la guarigione della*

լոյ իր ունկնդրաց, թէ Կոստանդիանոսի պատմութիւնը պիտի ըմէ, անդէ՞ն կը Ոկա-
 ռազրէ այլաբանօրէ՞ն, թէ Կոստանդիանոս 'ի ծնէ բորոտեալ էր. — թէ այս (Սորօրիմակ)
 բորոտութիւնս — Կրիստոս — կը կրէր մա իւր հակին և շրջանը վերայ, երբ ծնաւ. —
 այսպէս կազմեց զՍա Աստուած յարգանդի ժօրն, հայրը հետեանս լինելուն համար,
 և որպէս զի որդին ևս հակինս ըլլայ. — այս բորոտութեամ աղազաւ այնպիսի զար-
 շահոտութիւն կը բուրէր ամէկ, որ բաց 'ի իւր մօրէ՞ն ոչ այլ ոք կը հանդուրժէր ամոր
 մտեմնալ: — Մինչդեռ անոր հայրը Կոստոս — Կրիստոս — ամէն բժշկաց ցոյց կու տար
 զորդին, առողջացնելու յուսով, մայրն ընդհակառակն ցաւազին կը պաղատէր, որ
 չառողջամայ, զի մի առողջամայով հետեանս մնայ. այլ կ'աղօթէր որ էրիկը Կոստաս
 մեռնի, վասն զի ինքը զիտէր թէ օր մի որդին պիտի միապետէր, Բարդուղիմէոս
 ցնէ և Կոստոսը հետեանս Կրիստոսին: — Աստուծոյ հրեշտակը կը լսէ հեղինեայ աղեր-
 սը, — կ'աւուր Կոստասայ հոգին. — մեծամեծք կը խմբուի 'ի թաղել զվայսրն և
 միտիւթարել զհեղինէ. իսկ մա թէպէտև առ արտաքս կ'արտասուէ, քայց սրտսնց կ'ու-
 թախանայ: — Կը լրամամ սգոյ օրերն, և Կոստանդիանոսի թագաւորելու ժամանակ
 կըն հասած է. — երբ Կոստոսը Կրիստոսին յարմարէ, — անոն էր Կոստոս
 ին հարին անոր Կրիստոսին, և անոն Բարդուղիմէոս ին սոյն Կոստոսը հանաւ. — Աս-
 տուած կ'որոշէ ապա ամոր զահակաւութիւնը, — մեծամեծք առհասարակ կու զան
 մատուցանել ամոր իրենց մեծարանքը, քայց մա զարշահոտութեամբ ամենուն զը-
 գաւանք կ'արդէ: — Յետ որոյ ամէն կողմ դեպքամբեր կը դրէ, և առանձին մամա-
 կաւ հարեանքն Կրիստոսին կը կամչէ, — խորհուրդ կը հանցնէ իր հիւանդութեան
 մամար, — մորա ժամադիր կ'ըլլան վաղիւն պատասխանելու. — բորո զիշերն յօգ-
 նութիւն կը կրչն զՄատանայ և զՄտութիւնը. — կը հասնի առաւօտը, — քազմած է
 բորոտեալ կայսրն իր զահուն վերայ հարդեանք խորհուրդ կու տան, որ 400 մամ-
 կըտիս ժողովէ իրենց մարց հետ, զենու զնոսա պղծնէ աւազանի մէջ, լուացուի անոնց
 արեամբ և պիտի բուժի. — հրաւիրանաց մամակներ և կը դրկուի կայսեր կողմնէ քա-
 ղաքի մեծամեծաց և զաւատապետաց, — կը ժողովուրդ մարք հանդերձ մամկանք, և
 դատարորք կը ծանուցանեն անոնց կայսեր հրամանը. — լուրը կը տարածուի հուովմայ
 մէջ. — Կրիստոս (քրիստոսնից) Կրիստոսը կ'իմանայ ըլլալիքն և կը դիմադրէ. — մախ
 կը պաղատի առ Աստուած, ապա թուղթ մի կը գրէ առ Կայսրուհին ձեռնտու ը-
 լալ իրեն. — կ'ընդունի ամոր պատասխանն և աշակերտութիւնը, — կը փութայ առ
 կայսրն, — կ'իմացնէ հարդից խաբէութիւնը, — և մամկանց ազատութիւնը կը
 խնդրէ, Կրիստոսը որով անոր, որ ինքնակալ անոն արեանց — արքա սասանի Լրոյ հարստ
 և Բարդուղիմէոս, ապացոյց բերելով Արտաքսէ զԿրիստոս Կրիստոս. — կը մերժէ Կոստանդիա-

սա lebbra ». զոր թարգմանեց յասորոյն և հրատարակեց հանդերձ ծանօթութեամբ և
 քազարա Արեւոյ 1. Տրոպիզոն 1882: Այս ճառս կը գտնուի ասորերէն երկու
 հոմագիր ձեռագրաց մէջ, որք են զատիկամի թիւ 117, և Բրիտ. Մուզէոնի թիւ 803 գրչա-
 զիրք: Առաջինն, — ըստ մամրազմի ջմութեամ յիշեալ զիտեմականին, — գրուած է 919-927
 ի միջոցները. իսկ վերջինը դեռ աւելի հին, ըստ Արտաքսէ, այսինքն է թ. դարուն: Այս ձեռա-
 զիրս թէն ըմտրելագոյն, քայց յառաջոյ և յետոյ պակասաոր է. Տրոպիզոնցամի հրատա-
 թակութիւնն առաջնոյն վրայէն եղած է:

1. որոց խորագրերն է. « ի կողմնէ կայսեր ողջոյն և քաջողութիւն քաղաքին և ամս-
 մայն մեծամեծաց: Այս թղթերովս կը ծանուցանեն ձեզ, թէ համդիսաւոր ուխտ մի պիտի
 կատարեմ առ ամեմայն մարս ամգրամկածինս. ուստի ձեզնէ իւրաքանչիւր ոք յղէ առ
 իս փութով հազար մամկունս, և պիտի ընդունի ինծմէ պարգևս »:

մարմինը եղբայրներու կոչուած բորոտութեամբ կ'ապակամի . — քրիստոսն կ'ախարհ-
 մերմ և Գարսիսն բժիշկներ չնմ կարող բուժել զնա . — կը դիմէ մա առ Տրդատ որ-
 պէս զի 'ի Գարսից և 'ի Հնդկաց դիւթեր յղէ առ ինքն . — կու գամ, քայց 'ի գուր . Դ
 քորմերէն ոմամք՝ դիւաց խրատով խորհուրդ կու տամ կայսեր քազմաթիւ տղայս
 միթե՛ն աւագանի մէջ և ամոնց շերմ արիւնով լուացուիլ և արողչանալ . — Իրանմը
 կը կատարուի, քայց մա լսելով տղայոց և մարց որքմ ու լացք՝ կը գորովի, ամոնց ազա-
 տութիւնը՝ իր արողութեմէ լաւ համարելով . — որոյ 'ի փոխարէն տեսիլքի մի մէջ
 յԱւագքեղց պատուէր կ'ըմդունի մկրտուիլ 'ի ձեռն Սեղընատրոսի, որ հալածուելով
 Սոսիսն լեւը պահուրտած էր . — կը հաւատայ 'ի Քրիստոս և կը ջնջէ բոլոր բըւ-
 մաւորները :

Ինչպէս կը տեսնեն ըմթերցողք, վերոյիշեալ յոյն և լատին աղբիւրներէն աւելի ճոխ
 են Սրճեցին և Խորենագի . մամաւամը վերջնա ողջապի համախօս՝ մոյշեպի ևս աւելի
 մամրամամ կէտեր կը մերկայացնէ Կոստանդիանոսի և Սեղընատրոսի ստեղծաբա-
 մութեանց : Վիստոմեան եզբարցմէ և 'ի Հարց մերոց սկսեալ՝ զիտմակամք առ հասա-
 ըակ ուշադիր եղամ այս բանիս : Ֆրոնթինագահմ և Դիւլէմ՝ իրենց հրատարակութեանց
 մէջ դիտելով մէկ կողմէն Սեղընատրոսի ստեղծաբանութեան արևելեան բնադրոյմը,
 միւս կողմէն ալ Սրճեցու և Մովսիսի հնութիւնը, հոմ յամզեցամ, թէ այս երկու հե-
 ղիմակներէս միմ գրած ըլլայ Սեղընատրոսի ստեղծաբանութիւնը . իսկ ամոր Յախկին
 խամծարուրը դրին յնդեսիս, կամ 'ի Մծքիմ : Մամաւամը թէ Դիւլէն ենթադրելով
 որ Խորենացին անտարակոյս 451—455 ի միջոցը գրած ըլլայ իր պատմագրութիւնը,
 չտարակուսեցաւ առաջնութիւնը Մովսիսիմ տալու, այնու զի Սրճեցին 472 էն և տա-
 րիներ վերջ խօսած է իւր մատը . քայց ասկէց ծագելիք դժուարութեանց առաջն առ-
 մելու համար, կը յարէ, թէ Ծ դարում Ասորոց և Հայոց յարաբերութիւնք այնքամ
 սերտ էին, որով միոյմ մէջ կատարուած բան մի դիւրաւ կարող էր միտին փոխանցիլ :

Յիրաւի, եթէ Խորենացու պատմագրութեան ժամանակամիջոցն՝ ամոր Ա . գրոց
 Ա . գլխէն, և Գ . գրոց վերջին, այն է ԿԸ . գլխէն չսկսենք; շատ ճիշտ կ'ըլլայ Դիւլէնի
 եզրակացութիւնը՝ Մովսիսի առաջնութեան մասին . որովհետև Ա . գիրքը գրած ժա-

1. Դիւլէն իր հրատարակութեան մէջ պատճառ մի չիտար ճառիս 472 էն վերջ գրուած
 ըլլալուն . իսկ Ֆրոնթինագահմ՝ Սրճեցու ճառի այն քաջատրութեմէն, ուր յետ յիշելոյ
 զԵզեկիս, « O gran re Ezechia vieni e conduci con te la penitenza » etc. խօսքերով խօսքմ
 առ ունկնդիրս ուղղելով՝ կ'ըսէ այսպէս . « Fin ad ora ho parlato con voi di molte storie, ma
 d' ora in poi una sarà la storia che tratteremo, parlerò molto sul proposito della penitenza
 per annunziarla chiaramente agli uditori », և այլն . կը հետևցնէ, թէ Սրճեցին արդէն 'ի վա-
 ղուց քարոզիչը խօսած էր, և թէ մորա առաջին քարոզը « Եզեկիլի կառքիմ վերայ »
 տրուածն էր : Սրճեցույ ամամու կենսագիրն (տես Assemani Bibl. Orient. T. I. p. 28 - 289)
 կ'ըսէ, թէ Յակոբ իր կենաց 22 հասակին մէջ խօսեցաւ իր առաջին ճառը՝ Եզեկիլի կառ-
 քիմ վերայ, և թէ մա ծնած է յամի ճեառն 452 : Ուրեմմ կենսագրի ըսածին մայրիով, յամի
 ճեառն 474 պէտք է որ արտասանած ըլլար իր այն ճառը, ըստ Աստմամեայ 472 : Եսպիս-
 կոպոս եղաւ 67 ամեայ հասակին մէջ և երեք տարիէմ վախճանեցաւ, այսինքն է 521 ին :
 Ուրեմմ կենսագրի ամաղութ ժամանակագրութիւնն եթէ ստոյգ համարիմք, պէտք է որ
 ճոտամադիանոսի վերայ խօսած ճառն ալ 474—518 ին եղած ըլլար . զի քստ վկայութեան
 տորքն իսկ Սրճեցույ՝ վերջինն կրաւ այն իր արտասանած ճառերում, և ամկէ վերջ եպիս-
 կոպոսական գործերով զբաղեցաւ :

Բայց զայս ևս դիտելու ենք, որ Ասորիք յամախ շփոթած են Յակ . Սրճեցին՝ միւս Յակ .
 Մանուէլն հետ, որով միոյմ ժամանակն և գործերն իսկ կարէին դիրաւ շփոթած ըլլալ
 միւտոյն հետ :

մամակ՝ Մահակ Բագրատունի մ ղեռ ողջ էր, հանդերձ Վարդանան. իսկ վերջին ողբն յօրինած ժամանակ, ղեռ Վահան Մամիկոնեամ ի իշխած չէր, ապա թէ ոչ Մովսէս պատճառ չպիտի ունենար գանգատելու, թէ « Մակարէ ոչ փրկէ. Նդիսէ՛ (այսինքն է Պաթողիկոս) ոչ մնաց՝ կրկին հոգով օծանել զՅէու » . վասն զի անկէջ վերջ, այս ինքն է 485 էմ աստիմ, Վահ. Մամիկոնեան արդէմ փրկած էր զՎայս, և Յովն. Մամ ղակունի կայր և օծանէր կրկին հոգով, — այս է՛ անտարանին և հայրենեաց, — զիշխանը, Վարդարայաստու եկեղեցւոյ մէջ ըրած պերճաբան ատենախօսութեամբ մի: Բայց որովհետև ամաչառ քննադատութիւնը՝ Մովսիսի վերոյիշեալ զլուսններն իսկ արդէմ երկբայութեանց եմթարկած է, և այսօր իբրև ապացուցեալ ճշմարտութիւն ըմդումելու եմք, թէ Խորենացւոյ պատմագրութիւնն՝ ոչ եթէ Ե. դարու առաջին կիսում, այլ 475—480 հազիւ աւարտած է. ուրեմն կարող էր մա մոյն իսկ Սրճեցւոյ յիշեալ ճառը կարդացած ըլլալ, եթէ ուրիշ հնագոյն աղբիւրներ ամոր ծանօթ չլինէին: Այս բանս ղեռ անիի հաւանական կ'ըլլայ, եթէ ստոյգ է Քովմ. Արժոււնոյ և Անեցւոյն ամոր համար աւանդածը, թէ Խորենոյ ծերոյն կեանքն և գրատր գործունէութիւնն՝ երկարածոցեալ մինչև Ջենոն կայսեր օրերը, ոյր վասն և **դեպի Բագրատունի** անուանուած է, որպէս երբեմն **ձեռքով** Սիմէոն:

Նրկորդ ղիտելու եմք և այս, որ Օքսֆորդի **Բարթեմեոս** Մատենադարանի աստիւրէն թիւ 153 Ջեռագրին մէջ, — յէջ 13—16, — Յակ. Սրճեցւոյ վերոյիշեալ ճառը՝ Ս. **Եփրեմի Խորենի** ասորոյ ըմծայուած է՝ այս մակագրութեամբս. « **Ճորձի Կրտսէ** Բիւն յայնու Բագրատունի Կրտսէրէնսի. Տեառն Եփրեմայ Ասորայ (ասացեալ) Էփրեմայի և Օնոն Կրտսէն Եփրեմայ » : Յամին 1863 չտարակուսեցաւ բնա Ուրբէտ հրատարակել զայն Ս. Նիքիմի հատրմախր գործոց՝ մէջ. չնայելով որ Բիւնէն, ըմդ հակառակն, Սրճեցւոյն ըմծայած էր զայն, հաստատելով այն փաստին վերայ, թէ **Կրտսէն** չափով գրուած չէ այն, զոր 'ի գործ ածէր Նիքիմ. այլ 12 ակամ վանկաչափով զոր հնարեց Սրճեցին: Այս փաստս ստուգիւ եզրակացուցի է, եթէ իրօք Սրճեցին յառաջ առ Ասորիս բնա գոյութիւն ունեցած չէ 12 վանկաչափը: Բայց **Նեբէ**՝ զիտմալով հանդերձ Բիկընիլի այս ըմծայութիւնս, ընտրեց դարձեալ Նիքիմի գործոց մէջ դասել զայն:

Արդ՝ 'ի մկատի ունելով Մովսիսի պատմագրութեան և Սրճեցւոյ ճառին վերաբերեալ այս կրկին և խնդրական պարագայներս, մեմք հոս ղիտարուութիւն չունինք պնդելու, թէ Խորենացին անպատճառ Սրճեցին առած է իւր Բ. զրոց 2Գ. զկտտեղեկութիւնը, այլ համոզուած ենք, թէ թէ՛ Սրճեցին և թէ՛ մերս Խորենացի՝ Սեղբեստրոսի **Վարդ** ծանօթ գրութեմէն առած չեն իրենց տեղեկութիւնը, այլ կամ ամոր հիմաուլց բնագրէն, որուն կը հետևէին թագում եկեղեցիք, — ըստ վկայութեան Գեղասիոսեան **Յաննէ**, և կամ Կոստանդնուսի հնագոյն պատմութեմէ մի:

Յիրախ առամօրն ցուցմանց ղեռ չօնոնարկած, մախ իբրև երկուքին վերաբերեալ և ըմդհամուր եղբուրթիւն՝ ղիտելու եմք, որ մոյն իսկ երկարածոցելով Սրճեցւոյ ճառի գրութեան ժամանակամիջոցը մինչև յամն 518, յորում կոչուեցաւ յեպիսկոպոսութիւն Բաղնայի, վերջ տալով իր ճառախօսութեանց, և Խորենացւոյ պատմագրութեանն՝ յամն 503, սակայն և այնպէս չէին կարող ականատես ըլլալ՝ ոչ մա սեղբեստրոսեան

1. Այս խորագրով. « S. Ephremi Syri, Rabulæ, etc. Opera Selecta », Oxford. 1863, p. 355 - 361.
 2. « Lehrbuch der Patrologie und Patristik », Mainz 1883, B. II. s. 263.

Վարուց ասորերէն թարգմանութեամ, և ոչ սա՛ յունարէն կամ հայեցի թարգմանութեամ: Առ ի՞նչ արդեօք. վասն զի մախ, — ինչպէս ծանուցիմք, — ըստ ընդ համուր կարծեաց ընմադատից՝ լստիկ խմբագրութիւնն եղած է Զ. դարու առաջին քստորդիկն, իսկ յունարէն թարգմանութիւնն անկէց շատ տարիներ վերջ: Եւ որովհետև մոյնքամ ասոյգ է, թէ ասորերէն թարգմանութիւնն ալ յետ ամաց՝ յունարեմի վրայէն եղած է, այսինքն է 530—550 ի մօտեր. իսկ Յակոբ Սրճեցիմ յամիմ 521 և Խորենացիմ 503 արդէն կըքած էին իրենց մահկանացուն. ուրեմն չկարէին կարուպ զայն և ոչ ալ տեղիս մէջ բերել:

Այս բանն այնու մամուսանդ աւելի կը հաստատուի, զի Յովհ. մականուանեայն Աւետիքի՛ 1 և Դիւն-Է-Թեյ-Ն-Շ-Ր՝ յԱսորուց, և Թէոփահէս՝ Ի. Յունաց շատ ուշ կու գան Ի համդէս. — այսինքն է՝ առաջինը՝ Զ. դարում վերջ, իսկ երկրորդն և երրորդն՝ յԸ. դարում, — Սեղբեստրոսի Վարդայ ասորի և յոյմ թարգմանութեանց իբրև առաջին ներկայացուցիչներ. ուրեմն եթէ Զ. դարում սկիզբն եղած ըլլային այն թարգմանութիւններն, կարելի չէ որ ամբողջ դար մի Ի ի բուրժեան մնային և առանց մէկէ մի յիշուելու:

Գարպ ուղղակի Սրճեցուց ճառի պարունակութեամբ, կը տեսնենք ամոր մէջ երկու բնորոշ յատկութիւններ, որոնցմով Սրճեցիմ որչափ որ կը տարածայնի Սեղբեստրոսի Վարդայ, մոյնքան ևս կը համաձայնի Զոսիմոսի աւանդածներուն: Արդ՝ որչափ որ ալ այլաբանօրէն Սկարագրած է մա Կոստանդիանոսի կենսագրութիւնը, և այնպէս կամ իսկապէս պատմական կէտեր, զորս մա իմքն ուզած է այնպէս ներկայացնել, — ինչպէս ամոր մախերգանքն յայտնի է: Ուստի մոյն իսկ այս պատմական կէտերում և Սեղբեստրոսի Վարդայ մէջ ահագին խարոց մի կը տեսնուի ակներև: Առաջին՝ դիտելու ենք, որ Սեղբեստրոսի Վարդայ Սեղբեստրոսով կը սկսի և կ'աւարտի, Կոստանդիանոսի սատր ու ինչ է. իսկ Սրճեցուց գլխաւոր նիւթն է Կոստանդիանոս. Կոստանդիանոսի պատմութեամբը կը սկսի և կը վախճանի, Սեղբեստրոս ամուսամ բնաւ յիշատակութիւն չկայ: Բ. ըստ սեղբեստրոսեան ստեղծարարութեամ՝ Ս. Սեղբեստրոս է միակ գլուխ և գործի կայսեր դարձիմ, մկրտութեան և բարեգարդութեանց. իսկ ըստ Սրճեցուց, ընդհակառակն, Իւրեայ Աւետիքի է պատճառ այսմ աննկայնի, և գլխաւոր գործիչ, որ Կոստանդիանոսի դարձէն յառաջ իսկ ծանօթ էր մնա, և Զոսիմոսէն յիշուած Եփեսոսացի հետ մոյն է, այն ինքն է Ռոմայ սպանիացիմ. Սեղբեստրոս միայն կը մկրտէ զմա: Սեղբեստրոսի Վարդայ կ'աւանդէ, թէ Սեղբեստրոս այն ժամանակ վախճած էր Ի Սիւր-Գոպի՛ լեռը. Սրճեցիմ, ընդհակառակն, կ'ըսէ, թէ կը գտնուէր Եփեսոսէն, երբ գերեաց առաջնորդը զմաց մանկանց ազատութեան աւետիսը տարու, և հրախրելու Ի մկրտել զկայսրն: Սրճեցուց մէջ բերած Կոստանդիանոսի առ սնծա մեծս ուրբած մամակն ևս՝ տարբեր յարբերաց կը յառաջագայի. զի Սեղբեստրոսի վարուց մէջ ամոր յիշատակութիւնն իսկ կը լպակի: Սրճեցուց ճառին մէջ կայսրը բոլորութիւնն Ի ճէ Եւրո կը պատմուի. իսկ Սեղբեստրոսի Վարդայ Եփեսոս եղած կը համարի և Ի պատուհաս՝ քրիստոնեաները հալածելուն: Վերջինս կ'աւանդէ, թէ Ի Պարսից անտի հրախրեց զքրիշէս և զզէսս Կոստանդիանոս. իսկ Սրճեցիմ Ի Բ-Է-Է-Է եկած կը համարի զՔրիստոնեայն. Սեղբեստրոսի Վարուց մէջ, եկեղեցուց պեան է, որ կը յորդորէ զկայսրն, — քաղցրութեամբ և ոչ պատուհասիս, — յորդորել Ի

1. Sbu V'hp. Ասորի. Cronique, traduit par V. Langlois, Venise 1868, p. 113.

դարձ զհեթանոսս և զհրէայս . իսկ ըստ Սրճեցւոյ ընդհակառակն, զբրեաց առաջ_
 մորդն անգլիաբար **Վարդ Գրեգորեայ Էնայն Վ ԿԷ** : Սեղբեստրոսի Վարուց համաձայն
 հեղինակ դարձը Գոստամիդանսիմէն մեր չպատահել է : Իսկ Սրճեցւոյ ճառին մէջ,
 ընդհակառակն մա իբր 'ի վարդոց քրիստոնեայ' կը ջանայ որդին ևս դարձնել յայն,
 աշխատելով ընդ զբրեաց առաջմորդին : Բաց յայցսմնք, դիտելու ենք, որ Սրճեցւոյ
 քով չկայ քանա յիշատակութիւն Կապիտոլինի պարկն և վիշապին, — զրէից հետ
 ըրած Սեղբեստրոսի վիճաբանութեամ, — ցլու սպանման և Սեղբեստրոսի ձեռքով
 յարութիւն առնելուն, — պահոց և ապաշխարութեամ, այլովքն հանդերձ : Ուրիմն
 այս և ուրիշ էական տարբերութիւններէն չստիպելով, կ'ըսենք, թէ Սրճեցւոյ աղբիւրն
 ոչ միայն տարբեր ըլլալու էր Սեղբեստրոսի ծանօթ **Վարդ**, այլ թէ հաւանօրէն հե_
 թանոսական եղած է, որուն յայտին ապացոյց է Ձոսիմոսի հետ ունեցած մեծ մնա_
 մութիւնը, — կայսեր դարձի մկատմամբ :

Իսկ մկատմամբ Խորենացւոյ և Սեղբեստրոսի Վարուց հայերէն թարգմանութեամ,
 դիտելու է նախ, որ այդ թարգմանութիւնն հիւշ յառին 690 **Փետր Տէր-Կոյ** ձեռ_
 քով եղած ըլլայ, — զոյգ ընդ պատմութեան Սոկրատայ, — և հիւշ անկէց 18 տարի
 յառաջ « **Արտիս Գրեգորէ Ձորի-Գրեցայ** » ձեռքով, — ինչպէս կ'աւանդէ Էջիւ_
 անծի Մատենադարանի գրչագրի մ'արձանագրութիւնն ¹, — գրեթէ դարակամ խոտ_
 րոցիւ հեռի կ'իցնայ 'ի Խորենացւոյն . ուստի կը մնայ մեզ, — ըստ ոմանց, — կամ
 ընդունել Խորենացւոյ պատմագրութիւնն իբր յԷ . դարում գրուած, և կամ որոնել ա_
 մոր դեռ անկի հմազոյն աղբիւրներ :

Առաջին կէտը մեզ համար այնքան անյարմար է և կամայական, զոր և ոչ իսկ
 մանրագին թմուկեան ենթարկել արժան էր, եթէ այլք այնքան կարևորութիւն
 տուած չըլլային : Արդ՝ անծանօթ Ձորիփորեցւոյն և Փիլոնի Տիրակացւոյ ընծայուած
 կրկին թարգմանութեանց լեզուն և ոճն, որքան կապարձ՝ յոսկոյ անտի, և օտար լսելիք միայն
 կարեն շփոթել զանոնք ընդ իրեարս : Բ. Սեղբեստրոսի Վարուց այդ կրկին թարգմա_
 մութիւնք՝ ըստ իս ոչ հիւշ է . դարուն, այլ հաւանօրէն Ժ — ԺԱ . դարէն յետոյ եղած
 են և Սոկրատայ թարգմանութեան հետ միացած . և հաւանօրէն այսպիսի գրական
 խարդախութիւն մի յաշողցնելու համար դուրս թողուած են յոյն պատմագրի Ա .
 զրոց առաջին տասմ զլուխները, պահելով անոր Յառաջարանը ԺԱ . զլուսն վերայ :

Թէ տտուզի Ժ — ԺԱ դար ծանօթ չէր Հայոց՝ Սեղբեստրոսի Վարուց հայերէն թարգ_
 մանութիւնն, ունինք ապացոյց նախ ԺԱ դարէն վերջ եկող **Յոսիմոս**, որք առաջին
 անգամ անկէց ամբողջական քարտածներ կ'ընեն, մերթ ըստ առ քառ, և մերթ իրեմց
 ուզածին պէս յարմարցնելով . և հայերէնի մէջ չեղած մատուցմն ալ՝ յուճարեմէն կը

1. Յիշատակարանս՝ այն ձեռով ինչպէս արտագրեց « Արարտ, թիւ Ա. 1893 — աղաւ_
 դեալ կ'երևի, և կամ սխալ յառաջըրբութիւն մ'ըլլալու է Ասորկայ այն տեղոյն, — Բ. 2, —
 ուր Սոկրատայ պատմութեան թարգմանութեան համար ըսուած է, թէ կատարեցաւ փ_
 լոնի Տիրակացւոյ ձեռքով և **Գրեգորէ Կարգոյ** պատրկի հրամանաւ . իսկ յիշեալ յիշա_
 տակարանն, — ըստ ֆ. Տէր — Մովսիսեանի հրատարակութեան, — մոյն Կաստարականի
 հրամանով եղած կը համարի Սեղբեստրոսի պատմութեան թարգմանութիւնը, զոր կարելի
 չէ ըմբռնել, զի այն թարգմանութեանց միոյն լեզուն այնքան մոր է, որ և ոչ իսկ փիլոնի
 կարելի է ըմբայել, քարդատելով մոյն իսկ ամոր ձեռքով կատարուած Սոկրատայ շա_
 րաբանութեան հետ :

թարգմանն : Միքայէլ Ասորիմ իսկ իր վերջոյնեալ տեղին կարծէք թէ հայերէմ թարգմանութեամբը ճիշտացուցած է : երկրորդ՝ հայերէմ թարգմանութեամբ մէջ կամ այնպիսի հաստատածներ, որոնք կը պակասն յոյն և լատին թարգմանութեամբ մէջ. այսպէս ալ վերջնոց մէջ կամ շատ քաներ, զորս 'ի զուր է որոնել հայերէմի մէջ. քայքայ Յայտմաւորք երբեմն զայն իսկ կը պարունակեն : Այս կարեւոր տեղերս ծամօթութեամբք մատնամիջ պիտի ընենք :

Սակայն եմթարգրելով իսկ, թէ Սեղբեստրոսի Վարուց այն կրկին թարգմանութիւնք յէ. դարուն եղած ըլլան, — ինչպէս կ'ենթադրեն Կարրիէր և Փ. Տէր — Մովսիսեան, — ես պիտի ապացուցանեմ որոյն իսկ Սոկրատայ պատմագրութեամ թարգմանութեամ միջոցաւ, թէ այդ թարգմանութեան հեղինակն աւելի օգտուած է Խորենացոյ պատմագրութենէն, քան թէ սա՛ մտտի : Արդ թէ Սոկրատայ թարգմանութեամ, — յէջ 57-61 և թէ Խորենացոյ Բ. գրոց 22 երրորդ գլխում մէջ Վրաց թագաւորին Միհրամայ գարծին, — Վրաց խաչին, — սրբուհոյն Նունեայ, — Հովսիսիմեանց և այլ հաստատածները իրարու համահայն են : Այս ամտարակուսելի է, թէ առաջին կէտը, այն է Միհրամայ դարծի պատմութիւնը թէ Մովսէս և թէ Սեղբեստրոսի Վարուց թարգմանիչն Սոկրատայ յոյն բնագրէն օգտուած են կամ արտագրած, իւրաքանչիւր իրեն յատուկ շարաքաւ մտութեամբ : Իսկ մնացած կէտերն, այսինքն եմ Վրաց խաչին, — իշխանաց համած խոտվութեամբ դէպքին, Նումէ և Հովսիսիմէ անուանց որոշ յիշատակութիւնն, այսպէս նաև Գրիգորի « Գիրքն » կամ Ազաթամզեղոյ յոյն բնագրի մէջ բնաւ չկան, այլ կը գտնուին միայն Խորենացոյ և Ս. Ղևոնդեայ թրուած Հայր Անթիմի գրութեան մէջ, այն է 'ի Պարթևիստէն Ինչի վրայ, — որ մի քանի տարի յառաջ յայտնուեցաւ : Ուստի պէտք է ըսել, թէ Սոկրատայ թարգմանիչն այդ տեղեկութիւնքը կամ Հայր Ահարոնի գրութենէն առած է, և կամ Խորենացիէն, — վասն զի Խորենացին ոչ յառաջնոյ ամտի կրնար առնուլ և ոչ վերջինէն, ինչպէս 'ի հետեւեալն պիտի տեսնենք : Հայր Ահարոնէն չէր կարող առնուլ, որովհետև նա յասին 912 գրած է յիշեալ պատմութիւնը, և վախճանած է մօտ յամ 850-ն 931, այսինքն է Սոկրատայ թարգմանիչն երկու և կէս դար վերջ. ուրեմն կը հետևի թէ Խորենացիէն քաղած է զայնս, գրէթէ բառ առ բառ կրկնելով Մովսիսի 22. գլխու մէկ տեղին, ուր կ'ըսուի. « Կիմ ոմն, անուն Նումէ, յընկերաց սրբոց Հովսիսիմեանց, 'ի ցրուելոցն, փախստեամբ հասնալ յաշխարհ Վրաց 'ի Մծխիթայ, 'ի քաղաքն նոցա մախազահ », և այլն :

Եթէ բանանք Սոկրատայ թարգմանութեան ժձ գլուխն, — ըստ յուն. Գ և Ժձ, — և Խորենացոյ Բ. գրոց 2Ը. գլուխն, ուր կը պատմուի Լիկիանոսի կայսրէն և արքունեաց փոխադրութիւնն 'ի Հռովմայ՝ ի Կոստանդինուպոլիս, միշտ մի և մոյն երևոյթը կը մերկայանայ դիմացմիս, ինչ որ մկատեց Կարրիէր՝ Սեղբեստրոսի Վարուց հայ թարգմանութեան և Խորենացոյ յիշեալ գրոց 2Գ գլխու համանիթ հաստատոց մէջ : Սակայն կը յուսանք թէ աստ ոչ խոհեմագարը Գարդիացիմ պիտի փորձէ մոյնը եզրակացումնել, և ոչ ալ Մովսիսեան պէտք պիտի ունենայ ամոր եզրակացութենէն խոսելու համար Խորենացոյ այդ գլուխն իսկ եկամուտ համարել. որովհետև հոս մի և մոյն բնագրէ, բայց տարբեր ժամանակի մէջ և տարբեր գրչով եղած բանահիւսութիւնք են : Դեմնք այդ տեղերը դիմացէ դիմաց, համադրեմ յոյն բնագրաւ, իրիմ միշտ երկու թիւնը մերկայացնելու համար :

1. Տես « Այսբարտ » 4. Ղ. Վ. Ալիշանի, Վեներտիկ 1890, էջ 104-106 :

Ի՞ր. Բ. Է. ԶԸ.

« Եւ իբրև յայտնեցաւ դաւմ, և գիտաց թէ մնա լուռ ոչ վնի Կոստանդիանու, ժողովեաց զգօրս ըմդ զինամալպատերագմաւ:...

Իսկ իբրև եկմ յաղթողմ Կոստանդիանոս, մատնեաց Աստուած 'ի ձեռս մորազկիկիանոս....

Եւ իմքմ Բամդերձ որդւ տվքմ մի թագաւորութիւն զՀռովմայեցւոցմ ցուցեալ, Կոստանդիանոս 'ի Նիկիոսիդացւոց քաղաքին կատարեաց:

Եւ ոչ պարտ վարկուցեալ 'ի Հռովմ դառնալ, այլ 'ի Բիւզանդիոնմ Բաստաւտէր զարքումիւմ, յանջէլէն ինչ Երեսնամեայ զերմայայտաւ առնելով շինուածս, Բնգապատիկ յաւելեալ պայծառացուցամէ:

Եւ սակս այնորիկ շինեաց յիշատակ իւր ասացեալմ Ստրատիզին. քանզի 'ի մնա զպատերազմակամսմ յօրինեաց կազմութիւն:...

Այլ Կոստանդիանոս աւնեմապատիկ յարդարեաց, և ամուսնեաց մոր Հռովմ, իսկ աշխարհ կոչեաց զմա Կոստանդիանոս յազգս:

Ս՛ր. Ա. Է. Գ. ԺԶ.

... « Ruptoque simulatæ amicitiaæ foedere hostes sibi mutuo facti sunt.. post tempore bello se invicem appetierunt.

Multisque proeliis terra marique conser-tis devictus Licinius, Constantino se dedi-dit...

Ita Constantinus to-tius orbis Romani im-perium adeptus, cele-brata igitur festivitate publica vicennialium suum...

tum in urbe sibi cogno-mine, quem quidem Bi-zantinum ante hac ap-pellatam. magnopere amplifica-tus, et ingente cinctam muris variisque ædifi-cis exornatum,

Quæ quidem lex in columna lapidea incisa publice in Strategio juxta equestrem imperatoris ipsius statuam collocata est.

Constantinopolim no-minavit, utque Nova Roma vocaretur.

Հ՛ր. Բ. Է. ԺԶ.

.

« Իսկ թագաւորմ դառնայր յետ պարզիկ յարեմանից 'ի Կոստանդիանուպաւ լիս

'ի Ի սակի թագաւորութեանմ,

և մորթեալ... և զԲամանումն քաղաքմ իւր, մեծացուցաւ մէր բարձր պարսպաւք և ամեմապատիկ Բրաշայի յարինուածովք զշինուածս սրմ յարդարէր. ըստ որեւ լիսն ցոցոյն լիսն Եւս, յամերևութից զերևելիս աւրարեալ, առաւելեալ յաւնեայնի...

որ Կոստանդիանոս յազգս անուանեաց, երկրորդ Հռովմ տիրացոց 'ի վերայ աշխարհիմ...

Սակագրութեան և Ջոսիսիսի, քան թէ Սեղբեստրոսի Վարուց: Այս էական կէտերս, որովք Խորենացի կը տարածայմի Սեղբեստրոսի Վարքէն, յայտնապէս կը ցուցնեն, թէ այն եղած չէ տիրապէս միակ աղբիւր Մովսիսի ասանդածներուն, այլ Կոստանդիանոսի կենսագրութիւն մի՝ Սեղբեստրոսի հետ ունեցած յարաբերութիւններով:

Արդ՝ ՚ի Սկասի ունեւով մէջ կողմէն ցայս վայր ըրած մեր քննադատութեան արդիւնքը, միւս կողմէն ալ Սեղբեստրոսի Վարուց ծագման, խոնարհութեան և թարգմանութեան մասին գիտնոց մէջ ամորոշ մնացած ծանրակշիւ խնդիրները, իցէ՛ բա՛մաւոր մի քանի արտաքինայարդար մամուլութիւններէ եզրակացնել, թէ Խորենացիմ՝ Սեղբեստրոսի Վարքէն ուղղակի առած է իր պատմագրութեան Բ. 24. գլխու տեղեկութիւնները. ապա ուրեմն ամոր պատմութիւնը է. դարուն վերջը պէտք է որ զրուած լինի: Ոչ, բնաւ ամենեւին: Այն եզրակացութիւնն, որ ստուգապէս կատարուած իրաց բնութենէ համուած չէ, այլ յերկարայութեանց և յերևութից՝ չկարէ լինել ճշմարիտ և ամոհիմարդիւ: Եւ սակայն գիտենք, որ Կարբիէր իր առաջին յօդուածը՝ ափ ափոյ գրելով՝ ուզեց պարզապէս Խորենացոյ մոր աղբիւր մի յայտնել, Սեղբեստրոսի Վարուց յումարէն թարգմանութեամբ, առանց խորազննիմ քննութեան. բայց երբ արծազանգ գտաւ այմ՝ ազգային քննասիրաց մէջ, այն ատեն խրախուսուեցաւ պատմաբանի աչքով՝ վերատիմ քննութեան բովէ անցնել Խորենացոյ ասանդածները. և պատմական զգտնելով զայնս, եզրակացոց, թէ բոլոր այդ հակապատմական տեղեկութիւնքը Կոստանդիանոսի այն պատմութեանէն առնուած են, զոր հայ թարգմանիչն իր կողմէն յօրինած և Սեղբեստրոսի Վարուց հետ միացուցած է:

Սակայն ընդունելով իսկ Կոստանդիանոսի պատմութեան գոյութիւնն իբրև ճշմարիտ, կ'ընենք, թէ Կարբիէրի եզրակացութեան վերջին մասը **Բ. 1. Այո՛, այն օրէն ՚ի վեր երբ Սոկրատայ ձեռագիրները Կարբիէրի ուսումնասիրութեաց յամենցել, հետամուտ էի Կոստանդիանոսի յիշեալ Պատմութեան** հեղինակն և քննազըր գտնել, հասնողուած լինելով, որ այն պատմութիւնը բնաւ հայ թարգմանիչ գործ չկարէր լինել: Ուրախ եմ որ հայ զբջարաց միջոցաւ հասայ այդ ցանկալի կիտիմ. ուստի այժմ կ'արող եմ ըսել, թէ ոչ եթէ Սոկրատայ զոց, կամ Սեղբեստրոսի Վարուց հայ թարգմանիչն եղած է հեղինակ Կոստանդիանոսի պատմութեան, այլ անկէց երեք դար յառաջ յոյն մի: Խորենացիմ, հետևաբար, զայն կը ճանչնար, և ամկէ քաղած է զէթ Կոստանդիանոսի և Հեղինեսայ և Կոստասայ մասին տուած տեղեկութիւնքը. հիմնուելով այն գործոյն աւելի հիմութեան՝ քան թէ ստուգապատում ըլլալուն վերայ: Խորենացոյ թարգմանաբար անկէց ըրած փոխառութիւնքը՝ թէ՛ ճոց գրութեամբ և թէ՛ իմչ իմչ պարագայներով շատ կը տարբերիմ Սեղբեստրոսի Վարուց հայ թարգմանութենէն, որուն գաղղիացի գիտնականը բնաւ կարևորութիւն տուած չէ:

Ո՛վ է, ուրեմն, այդ անծանօթ կարծուած՝ բայց բարդաւոր հեղինակն, որով միայն ամենը պիտի ելնէ Խորենացոյ պէս պատկառելի ճերմոսին և իմաստուն Մենտորը՝ քննադատութեան խտապահասնչ և միանգամայն բուզակալիւրչայ ատենէն: Գարիգի Ազգ. Մատենադարանի թիւ 46 հայ Ձեռագիրն՝ յետ ղնելոյ զԽորագիրս « **Պատմութեան 2 Կոստանդիանոսի Թագաւորի և Ջոսիսի Երբ Հեղինեսայ, Կոստանդիանոսի** », ամբն կը

1. Տես Տարմ. մեծ. հտ. Բ. Բ:
2. Որ շատ պակասաւոր է ՚ի սկիզբն և ՚ի մէջն, չգիտեմ հիմութեան, թէ ուրիշ պատճառաւ:

ծամուցանէ, թէ « Վասն ծննդեան Խորհրդոսին պատմեցից 'ի գրոց սրբոյ վկային **Ե-
 սի-ն-ո-սի** » : Այս անուանս հետքն անգամ չի գտնուիր ընտ. հետեւապար գուշակե-
 ցի, թէ կամ Եւսեբիոսի և կամ ուրիշ անուան մ' աղաւաղեալ ծնն ըլլալու է այդ. և
 իբր զմասցա Ձեռագրաց մին, այս իմքն է, 'ի թու. Հայոց ՊՂ = 1441 իմ գրուած
Ե. Յայտաւորութիւն, — զոր կը յիշէ մաս Աւաքել պատմիչն՝ տեսեալ 'ի Սպահամ, —
 յետ կարգելոյ 'ի 21 Մայիսի « **Յիշատակ է Կոստանդինոսի Բարեբարէն և Բարե-
 Հեղինակ** » . կը յարէ, — փորձիկ յառաջարանիմ մէջ, — թէ « Պատմեցից 'ի գրոց
Ե-սի-ն-ո-սի վկային » . և վնց ու կէս սեան մէջ կը պատմէ Գոստանդ Զրորոսի, Հեղի-
 մեայ և Գոստանդիանոսի արարուածները ¹ գրոս Սեղբեստրոսի Վարուց հայ թարգ-
 մանիչն իրքև Յախապատրաստութիւն՝ զետեղած է անոր սկիզբը, հակասելով իր
 գրած յառաջարանին, որ կը սկսի այսպէս. « **Սկիզբն Սեղբեստրոսի պատմութեան** » .
 և այլն : Այս երևոյթն իսկ յայտնի ապացոյց մ'է տարբեր աղբիւրի մի
 ներմուծման. և այս ներմուծումն կատարած է կամ իր գործին ամբողջ կենսագրու-
 թեան մ'երևոյթը տալու համար, և կամ անոր մէջ իսկ կար Սեղբեստրոսի վերաբե-
 ընալ մասն մի :

Ե-սի-ն-ո-սի, — որ և՛ Հիւսիրոս, — է այն մեծ վկայն, որուն յիշատակը կը կարգեն
 Հայր 'ի 4 Յուլիսի, խակ Յուլնք և Լատինք 'ի 5 Օգոստոսի : Հռովմէական **Վկայութեան**
Իննն, **Յայտաւորութեան** Յունաց, Հայոց, Սլաւո-Ռուսաց, և Արարս-Եգիպտական
Վկայութեան իրարու համաձայն կը հաւատան, թէ ստուգու մա 110 տարեկան
 հասակին մէջ հանգոյն Նոյիազարոսի չուգելով զոհել կոտց, Յուլիանոս Ուրացոյի հրա-
 մանալ վկայեցաւ ² : Յունա-Ռոմովմէական ամուսն կազմուած է **Էծն** և **Signum**, այ-
 սինքն է **Բարե-Նշան** բառերէն, բայց չի գիտցուիր ինչպիսի պարագայով մի : Այսչափս
 զիտեմք, — 'ի վկայարանութեանց, — թէ մա ինչպէս Գոստասայ Զրորոսի, այսպէս
 ման Գոստանդիանոսի զինուորակից եղած էր **Ի-սի-ն-ո-սի** դրօշու մերքև, և հաւատարմու-
 թեամբ ծառայած էր անոր յաջորդաց սինչն ցեովիանոս : Բարոնիոս ³ հաստատուած
 Գր. Նազիմզադեանց մէկ վկայութեան ⁴ վերայ, կ'որոշէ անոր մահուան տարին յամի
 Տեառն 332, 'ի սկիզբն Յուլիսի : Իսկ Պազետո 'ի Հննադատութեան ամբ Բարոնիոսի
 Օգոստ. 5 իմ կատարուած կը համարի զմա և առաջին ընդ վկայեալս 'ի Յուլիանոսէ,
 'ի զալ մորա յԱնտիոք :

1. Որոմք տեղ տեղ կը տարբերին Սոկրատայ ծեռագրաց ըմծայածներէն : Յօրինողն
 Յայտաւորքին 'ի յունէ թարգմանելով ուղղակի, ուզած է ինչ ինչ կէտերու պատմական
 ձև տալ. օրինակի աղագաւ, Գոստանդիանոսի կինը **Մ-սի-ն-ո-սի** անուանելով կը յաւելու,
 թէ էր մա « Դուստր Ծաքսսիանոսի թագաւորին և **Բարե-Վիսլեպիտեան** » : Գոստանդիա-
 նոսի և Հեղինեայ վերջին զործերն ևս կը յիշէ. խառնելով յայնս Յակ. Մծրմազեան արա-
 րուածն ևս, — զոր յիշեն Բուզանդ և Ազաթանգեղոս, — կը հրացնէ մինչն անոնց մահը.
 մինչևեռ Սոկրատայ Ձեռագրիմը՝ մախապատրաստութիւն համարելի է Սեղբեստրոսի
 վարուց, որ իբրք միշտ այն կէտն կը սկսի, ուր աւարտած է Գոստանդիանոսի ծննդա-
 բանութիւնն : Այս և մման երևոյթնոր ուշագրաւ եմ յայտմ :

2. Տես Bolland. Acta Sanct. Aug. T. II. p. 70. — 3. Մկ. Ազեքիան, Լի-Կո-ր-ը Վ-ր-
 օր-օր, զեգետ. 1810 :

3. Annal. T. IV. ad annum 362.
 4. Զատ. Ա. Տառ 9. էջ 91, ըստ Պարիզի հրատարակութեան 1609 :

Շարայարելի

Հ. Բ. Վ. Սարգիսեան